

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2021 թվականի հունվարի 20-ից 22-ը

Բելգիայի Թագավորություն (ք. Բրյուսել) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

Էդվարդ Հովհաննիսյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Բելգիայի Թագավորություն, ք. Բրյուսել, հունվարի 20-ից 22-ը

4. Հրավիրող կողմը՝

Համաշխարհային մաքսային կազմակերպություն

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը՝

Համաշխարհային մաքսային կազմակերպության ղեկավարության հետ հանդիպելու նպատակով:

6. Քննարկված թեմաները՝

Հանդիպման ընթացքում քննարկվել են փոխադարձ համագործակցության առնչվող մի շարք հարցեր, մասնավորապես՝ 2020 թվականին ՀՀ ՊԵԿ և ՀՄԿ միջև կնքված «ՀՄԿ nCEN ծրագրի օգտագործման վերաբերյալ» պայմանագրի կիրարկման և համակարգի հետագա ներդրման ու արդյունավետ շահագործման համար անհրաժեշտ միջոցառումները, որի շնորհիվ ՀՀ ՊԵԿ-ը հնարավորություն կստանա օգտվելու Մաքսային իրավախախտումների մուտքագրման և վերլուծությունների իրականացման nCEN (National Customs Enforcement Network) ծրագրից, Համաշխարհային մաքսային կազմակերպության ՀՀ-ում իրականացվող «Մերկատոր» ծրագրի ընթացքը, ԵՄ-ում և ՀՄԿ-ում ՀՀ մաքսային կցորդի աշխատանքային պայմանները, Համաշխարհային մաքսային կազմակերպության 2020-2021 թվականների ընթացքում նախատեսված աշխատաժողովները հեռավար ձևաչափով անցկացնելու հնարավորությունը, Համաշխարհային մաքսային կազմակերպության հավատարմագրման աշխատաժողովներին ՀՀ ՊԵԿ մաքսային ծառայողների մասնակցության ակտիվացման հարցերը:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Կայացել է հանդիպում Համաշխարհային մաքսային կազմակերպության գլխավոր քարտուղարի հետ, որի ընթացքում քննարկվել են մոտ ապագայում ՀՄԿ SS կոնֆերանսը ՀՀ-ում կազմակերպելու նպատակահարմարության և դրա հնարավոր

ժամկետների հետ կապված հարցեր, ինչպես նաև ՀՄԿ հավատարմագրման աշխատաժողովներին ՀՀ ՊԵԿ մասնակցության պատրաստակամության վերաբերյալ հարցեր՝ կարևորելով ՀՀ ՊԵԿ համակարգում հատկապես ՀՄԿ Տվյալների մոդելի հավատարմագրված փորձագետների առկայությունը: Քննարկման ընթացքում համաձայնեցվել են նաև ԵՄ-ում և ՀՄԿ-ում ՀՀ մաքսային կցորդի գործունեության պայմաններին առնչվող, ինչպես նաև ընթացիկ տարվա ընթացքում ՀՄԿ մի շարք աշխատաժողովների անցկացման հնարավորության վերաբերյալ հարցեր:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Հանդիպման արդյունքում պայմանավորվածություն ձեռք բերվեց nCEN համակարգի կիրառման հետ կապված ՀՀ ՊԵԿ և ՀՄԿ մասնագետների միջև տեսակապի միջոցով կազմակերպել հանդիպում, որի ընթացքում կուրվագծվեն դրա կիրառման քայլերը և ՀՄԿ կողմից ակնկալվող աջակցությունը:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Հանդիպման ընթացքում ՀՄԿ գլխավոր քարտուղարի կողմից առաջարկվեց 2020 և 2021 թվականների ընթացքում նախատեսված փորձագիտական և խորհրդատվական միջոցառումները, որոնք կորոնավիրուսային համավարակի պատճառով հնարավոր չի եղել կազմակերպել, հնարավորության դեպքում իրականացնել 2021 թվականի ընթացքում առցանց ձևաչափով:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

26.01.2021թ.